

ՀՈՒՆՎԱՐ 2023

ԱՄՍԱԿԱՆ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«ՎԵՈԼԻԱ ՋՈՒՐ» ՓԲԸ



1. Շահագործման տարածաշրջանի տնօրինություններ	3
1.1. Ջրամատակարարման համակարգի կառավարում	4
1.1.1. Ջրահեռացման համակարգի կառավարում	6
1.2. Ջրաչափերի փոխարինում և տեղադրում	7
1.3. Ջրահեռացման համակարգ	8
1.4. Կեղտաջրերի մաքրում և հեռացում	9
1.5. Էներգահամակարգ	9
1.6. Մեքենա-մեխանիզմներ	10
2. Առևտրային տնօրինություն	11
2.1. Բաժանորդների տվյալներ	12
2.2. Հասույթ	12
2.3. Գանձում	13
2.4. Դեբիտորական պարտքեր /Դրավաբանական վարչություն/	14
2.5. Ջրաչափեր	15
2.6. Ապօրինի միացումների հայտնաբերում և վերացում	16
3. Տեխնիկական տնօրինություն	17
3.1. Ջրամատակարարման շարունակականություն	18
3.2. Էլեկտրաէներգիայի կառավարում	19
3.3. Աշխարհագրական տեղեկատվական համակարգ	20
3.4. Ջրատար համակարգի բարելավում	21
3.5. Քլորի և խմելու ջրի մաքրման կայանների ծառայություն	23
3.6. 1-85 թեժ գիծ	23
4. Լրատվական ծառայություն	24
5. Որակի, առողջության և անվտանգության բաժին	27
5.1. Դասընթացներ/սեմինարներ	28
5.2. Ռիսկերի հայտնաբերում/մեղմացնող միջոցառումների կիրառում	29

ՀԱՀԱԳՈՐԾՄԱՆ
ՏԱՐԱԾԱՇՐՁԱՆԻ
ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.1. ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Հաշվետու ժամանակահատվածում «Երևան» ՇՏ սպասարկման տարածքում իրականացվել են վթարա-
որոնողական և ջրագծերի ու կոյուղագծերի վերակառուցման, ջրակորուստների հայտնաբերմանն ու վերացմանն
ուղղված աշխատանքներ, մասնավորապես

Նոր Նորք վարչական շրջան

● Նոր Նորք 5-րդ գանգված, Գալշոյան փողոց 10 հասցեում գտնվող $d=150$ մմ պողպատե ջրագիծը, որը սնում
էր ևս թվով 4 շենքերի, գտնվում էր քայքայված վիճակում: Հաճախակի էին կրկնվող վթարները, ինչի հետևանքով
բնակիչ-բաժանորդների նորմալ ջրամատակարարումը խափանվում էր: «Հյուսիս» տեղամասի աշխատակիցների
կողմից կառուցվել է $d=90$ մմ $L=50$ գծ/մ պոլիէթիլենային խողովակ, շահագործումից հանվել
է $d=150$ մմ քայքայված ջրագծի $L=50$ գծ/մ երկարությամբ
հատվածը: Կատարված
աշխատանքների ար-
դյունքում Գալշոյան
փողոց 10 շենքի և
հարակից շենք-շինու-
թյունների ջրամատակա-
րարումը իրականացվում
է նոր խողովակներով և
անխափան:



● Նոր Նորք 9-րդ գանգված, թիվ 197 դպրոցի մոտով անցնող $D=100$ մմ
պողպատե ջրագիծը գտնվում էր ծայրաստիճան
քայքայված վիճակում, առկա էին բազմաթիվ
վթարներ: Խնդրի կարգավորման համար «Հյուսիս»
տեղամասի աշխատակիցների կողմից իրականացվել
է $D=50$ մմ $L=70$ գծ/մ պոլիէթիլենային խողովակի
տեղադրում՝ ներթափանցման միջոցով: Արդյունքում
շահագործումից հանվել է $D=100$ մմ քայքայված
պողպատե ջրագիծը:



Ավան վարչական շրջան

● Աճառյան փողոց 26 շենքի մոտից դեպի թիվ 104 դպրոց գնացող $d=150$ մմ պողպատե ջրագիծը գտնվում էր
քայքայված վիճակում, ինչի հետևանքով առկա էր ջրակորուստ: «Հյուսիս» տեղամասի աշխատակիցների կողմից
կառուցվել է $d=110$ մմ $L=70$ գծ/մ և $d=50$ մմ $L=30$ գծ/մ երկարությամբ պոլիէթիլենային ջրագիծ:
Կառուցվել է երկաթ-բետոնե $d=1500$ մմ
դիտահոր, տեղադրվել է 1800×1800 մմ
դիտահորի ծածկ
թուջե մտոցով: Բա-
անարար հանգույց-
ներում տեղադրվել
են $d=100$ մմ, $d=50$ մմ և
 $d=40$ մմ փականներ:



Կենտրոն վարչական շրջան



● «Կենտրոն» տեղամասի աշխատակիցների կողմից Մոսկովյան փողոց, Թամանյանի արձանի դիմաց դիտահորում $d=250$ մմ ճնշման կարգավորիչ փականը փոխարինվել է $d=200$ մմ ճնշման կարգավորիչ փականով, տեղադրվել է $d=250$ մմ փական:

● Ծիծեռնակաբերդի խճուղի, դիտահորում $d=150$ մմ ճնշման կարգավորիչ փականը փոխարինվել է $d=200$ մմ ճնշման կարգավորիչ փականով: Իրականացված աշխատանքների արդյունքում բացառվել են ճնշման տատանումները և ավելցուկային ճնշումները:



Շենգավիթ վարչական շրջան

● Արտաշիսյան փողոց 86 հասցեի $d=100$ մմ պողպատե հին ջրագիծը գտնվում էր մաշված և վթարված վիճակում: Ջրագիծը շահագործումից հանելու նպատակով «Հարավ» տեղամասի աշխատակիցների կողմից ներթափանցման միջոցով կառուցվել է $D = 63$ մմ $L = 50$ զձ/մ պոլիէթիլենային նոր ջրագիծ, տեղադրվել է $d=50$ մմ փական: Իրականացված աշխատանքների արդյունքում շահագործումից հանվել է $D = 100$ մմ $L=50$ զձ/մ երկարությամբ քայքայված ջրագիծը, վերացել են նշված հատվածում ջրագծի մաշվածության պատճառով առաջացող վթարները:



Հաշվետու ժամանակահատվածում «Հարավ» ՇՏ սպասարկման տարածքում գտնվող մի շարք քաղաքներում և գյուղերում իրականացվել են վթարադրոնողական և ջրագծերի և կոյուղագծերի վերակառուցման, ջրակորուստների հայտնաբերմանն ու վերացմանն ուղղված աշխատանքներ, մասնավորապես

Վայոց ձորի մարզ

● «Վայք» տեղամասի աշխատակիցների կողմից Վայոց ձորի մարզի, Մալիշկա բնակավայրի 15-րդ փողոց 43 հասցեում (Մալիշկայի ՕԿՁ-ում) լրացուցիչ ջրաքանակի ավելացման նպատակով կառուցվել է $d=50$ մմ $L=70$ զձմ պեթ խողովակով ջրագիծ:



Գեղարքունիքի մարզ



● «Սևան» տեղամասի աշխատակիցների կողմից Գոմաձորի ջրաբաշխիչ հանգույցում իրականացվել են $d=100$ մմ թվով 2 ջրաչափական սարքերի տեղադրման աշխատանքներ՝ ներքին հաշվառում կատարելու համար:

1.1.1. ՋՐԱՀԵՌԱՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Արարատի մարզ

● «Մասիս» տեղամասի աշխատակիցների կողմից իրականացվել են Մասիս քաղաքի 3-րդ թաղամաս 12 հանրակացարանի 37 մասնաշենքի և Մասիս Կայարան 9-րդ և 10-րդ շենքերի կոյուղագծերի վերակառուցման, դիտահորերի և ե/բ ծածկերի տեղադրման աշխատանքներ: Կատարված աշխատանքների ծավալները

- ▶ պլեթ d=150մմ երկշերտ ծալքավոր խող. տեղադրում - 30գծմ
- ▶ պլեթ d=200մմ երկշերտ ծալքավոր խող. տեղադրում - 6գծմ
- ▶ ե/բ d=1000մմ, H=500մմ դիտահորերի տեղադրում - թվով 3
- ▶ ե/բ d=1000մմ, H=1000մմ դիտահորերի տեղադրում - թվով 3
- ▶ ե/բ ծածկերի տեղադրում 1200x1200մմ - թվով 8

● «Հարավ» տեղամասի սպասարկման տարածքում գտնվող Մանանդյան փողոց 1/3 հասցեում գտնվող d=250մմ կերամիկական կոյուղագիծը պարբերաբար

խցանվում էր անհամապատասխան թեքությունների պատճառով, տեղ-տեղ կտրված էր և շահագործման համար ոչ պիտանի: «Հարավ» տեղամասի աշխատակիցների կողմից իրականացվել է հին կոյուղագծի փոխարինում նոր d=250մմ L=12գծ/մ երկշերտ ծալքավոր պլեթ խողովակով, որի արդյունքում կոյուղագիծը գործում է անխափան:



● Շիրակի փողոց 5-րդ նրբ. 2/1 հասցեում d=150մմ կերամիկական կոյուղագծի L=6գծ/մ հատվածը փոխարինվել է d=150մմ երկշերտ ծալքավոր պոլիէթիլենային խողովակներով:



● «Հյուսիս» տեղամասի աշխատակիցների կողմից Նոր Նորք 2-րդ գ-ծ, Մոլդովական 56 հասցեում d=200մմ L= 24գծ/մ երկարությամբ կերամիկական կոյուղագիծը փոխարինվել է պոլիէթիլենային երկշերտ ծալքավոր խողովակներով:

● Նոր Նորք 8-րդ գ-ծ 35 հասցեում d=300մմ L= 12գծ/մ երկարությամբ կերամիկական կոյուղագիծը փոխարինվել է պոլիէթիլենային երկշերտ ծալքավոր խողովակներով:

Հունվար ամսվա ընթացքում ջրամատակարարման և ջրահեռացման համակարգում կատարված աշխատանքները հակիրճ նկարագրվում են Աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1 Աշխատանքների հակիրճ նկարագիր

Կատարված աշխատանքները	Չափման միավոր	Քանակ
Չափում հոսքաչափով	տեղ	2363
Որոնում խողովակափնտրիչ սարքով	մ	58530
Հոսակորուստի որոնում ակվաֆոնով	մ	49540
Հոսակորուստի որոնում կորեյատորով	մ	18490
Ջրաչափական հանգույնցներ ուսումնասիրություն, սխեմաների կազմում	հատ	52
Շահագործումից հանված ջրագիծ	մ	1498
Կառուցված ջրագիծ	մ	2322
Կառուցված կոյուղագիծ	մ	217
Վերացված գաղտնի վթարներ	հատ	14
Փոխարինված փական	հատ	49
Տեղափոխված/փոխարինված ջրաչափական հանգույց	հատ	300
Մաքրված դիտահոր	հատ	579
Գաղտնի վթարների վերացման արդյունքում տնտեսված ջրաքանակ	լ/վ	15
Վերացված վթարներ		
Ջրամատակարարման ցանցում	հատ	784
Ջրահեռացման ցանցում	հատ	1362
Պոմպակայաններում	հատ	0
Մաքրված անձրևընդունիչ	հատ	0

Հունվար ամսվա ընթացքում վերացված վթարների հակիրճ նկարագիրը ներկայացվում է ստորև բերված Աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2. Վերացված վթարների քանակային նկարագիր

	Պոլիէթիլենային խողովակներ (հատ)	Մետաղական խողովակներ (հատ)	Ցանցում շահագործման և պահպանման աշխատանքներ
Ընդամենը	659	744	771

1.2. ՋՐԱՉԱՓԵՐԻ ՓՈԽԱՐԻՆՈՒՄ ԵՎ ՏԵՂԱԴՐՈՒՄ

Ստորև Աղյուսակ 3-ում ներկայացված է հունվար ամսվա ընթացքում տեղադրված, փոխարինված կամ սահմանազատման կետեր տեղափոխված տարբեր տրամաչափերի ջրաչափերի քանակը:

Աղյուսակ 3. Տեղադրված, փոխարինված, տեղափոխված ջրաչափեր

Կատարված աշխատանքներ	Ջրաչափի տրամագիծ, մմ										Ընդամենը
	15	20	25	30	32	40	50	65	80	100	
Տեղադրված	127	5	0	0	0	1	1	0	0	0	134
Փոխարինված	241	19	12	0	7	7	11	0	1	2	300
Տեղափոխված	0	0	0	0	0	0	0	0	0	0	0
Տեխ. ակտ	90	1	2	3	0	1	3	1	0	0	101
Ընդամենը	458	25	14	3	7	9	15	1	1	2	535

Ընդհանուր առմամբ տեղադրվել, փոխարինվել կամ սահմանազատման կետեր է տեղափոխվել 15-100 մմ տրամաչափի 535 ջրաչափ: Կատարված աշխատանքների 86 %-ը վերաբերել է 15 մմ ջրաչափերին:

1.3. ՋՐԱՀԵՌԱՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Հունվար ամսվա ընթացքում ջրահեռացման ցանցում կատարված աշխատանքների հակիրճ նկարագիրը ներկայացվում է ստորև Աղյուսակ 4-ում:

Աղյուսակ 4. Աշխատանքների հակիրճ նկարագիր

h/h	Տեղամասի անվանումը	Կոյուղագծերի լվացում ւ	Կոյուղագծերում առաջացած խցանումների բացում տեղ	Կոյուղագծերի կառուցում կամ վերակառուցում գծ/ւ
1	Արարկիր	0	230	12
2	Քանաքեռ-Զեյթուն	0	260	0
3	Մաշտոց	0	268	0
4	Շահումյան	0	251	18
5	Շիրակ	320	461	20
6	Արթիկ	110	95	0
7	Ապարան	0	47	0
8	Ալավերդի	60	28	48
9	Աշոցք	0	8	0
10	Բերդ	0	11	0
11	Իջևան	0	53	12
12	Լոռի	0	230	0
13	Նոյեմբերյան	0	12	0
14	Սպիտակ	0	25	0
15	Ստեփանավան	1105	18	0
16	Թալին	0	13	0
17	Տաշիր	0	8	0
18	Չարենցավան	0	80	0
19	Արովյան	0	118	0
20	Հրազդան	0	103	42
21	Կենտրոն	220	273	0
22	Հյուսիս	210	290	42
23	Հարավ	0	433	18
24	Էրեբունի	0	180	0
25	Արմավիր	0	134	2
26	Արտաշատ	0	111	0
27	Էջմիածին	0	119	0
28	Աշտարակ	2520	29	0
29	Արարատ	0	85	0
30	Մասիս	0	73	34
31	Գավառ	870	25	0
32	Սևան	160	79	0
33	Մարտունի	0	23	0
34	Վարդենիս	150	13	6
35	Ճամբարակ	0	10	0
36	Դիլիջան	50	47	0
37	Վայք	75	11	0
38	Եղեգնաձոր	0	12	0
39	Ջերմուկ	0	58	0
40	Սիսիան	0	44	18
41	Գորիս	0	45	0
42	Կապան	495	90	24
43	Մեղրի	0	22	0
	Ընդամենը	6345	4525	296

1.4. ԿԵՂՏԱԶՐԵՐԻ ՄԱՔՐՈՒՄ ԵՎ ՀԵՌԱՑՈՒՄ

Ընթացիկ ամսում «Կեղտաջրերի մաքրման կայանների և էլ. սպասարկման» բաժնի ենթակայության տակ գտնվող կեղտաջրերի մաքրման կայաններում և պոմպակայաններում կատարվել են բազմաթիվ վթարավերականգնողական աշխատանքներ, որոնցից առանձնացվել են հետևյալ աշխատանքները.

● Գավառի կեղտաջրերի պոմպակայանի պոմպերից մեկի արտադրողականությունը բավականին ընկել էր: Պոմպը հորից դուրս բերելուց և գննելուց հետո պարզ դարձավ, որ պոմպի բանվորական անիվը մաշված է: Արդյունքում բանվորական անիվը փոխարինվեց նորով և միաժամանակ նաև մաքրվեցին հակադարձ փականները և այժմ պոմպակայանը աշխատում է բնականոն ընթացքով:

● Վարդենիսի կեղտաջրերի մաքրման կայանի էլքի վերգետնյա դիտահորերից մեկի ստորին հատվածից առաջացել էր ջրի արտահոսք: Չննության արդյունքում պարզ դարձավ, որ դիտահորի հատակի բետոնե շերտը ամբողջությամբ քայքայվել էր: Արդյունքում դադարեցվեց ջրի մուտքը դեպի դիտահոր և բետոնացվեց դիտահորի հատակը: Այժմ մաքրման կայանը աշխատում է բնականոն ընթացքով:

● Սևանի N5 կեղտաջրերի պոմպակայանում պոմպերի ավտոմատ աշխատանքը խափանվել էր: Չննման արդյունքում պարզ դարձավ, որ ջրի մակարդակի ռելեն շարքից դուրս էր եկել, որի փոխարինումից հետո պոմպակայանը աշխատում է բնականոն ընթացքով:

Բոլոր ԿՄԿ-ներում և ԿՊ-ներում իրականացվել են պրոֆիլակտիկ աշխատանքներ, ստուգվել են բոլոր սարքերը (թե էլեկտրական, թե մեխանիկական), կատարվել են կարգավորումներ:



Աղյուսակ 5. Աշխատանքների հակիրճ նկարագիր

h/h	Գտնվելու վայրը	Կառույցի անվանումը	Մղված կեղտաջրերի ծավալը մ ³	Մաքրված կեղտաջրերի ծավալը մ ³	Կեղտաջրից առանձնացած կեղտ տ
1	ք. Գավառ	«Գավառ» ԿՄԿ	0	62,187	10.8
2	ք. Մարտունի	«Մարտունի» ԿՄԿ	0	63,980	16.2
3	ք. Վարդենիս	«Վարդենիս» ԿՄԿ	0	174,168	5.4
4	ք. Ջերմուկ	«Ջերմուկ» ԿՄԿ	0	85,616	10.8
5	ք. Դիլիջան	«Դիլիջան» ԿՄԿ	0	105,353	9.9
6	ք. Սևան	«Սևանի» N3 պ/կ	16,693	0	0
7	ք. Սևան	«Սևանի» N5 պ/կ	8,669	0	0
8	ք. Գավառ	«Գավառ» պ/կ	11,850	0	0
9	ք. Վարդենիս	«Վարդենիս» պ/կ	20,450	0	0
10	ք. Ջերմուկ	«Ջերմուկ» պ/կ	0	0	0

1.5. ԷՆԵՐԳԱՀԱՄԱԿԱՐԳ

Թվով 385 բակային պոմպակայանում կատարվել են ուսումնասիրություններ, որոնց արդյունքում թվով 304 հասցեում վերացվել են հայտնաբերված թերությունները: Ինչպես նաև իրականացվել են վարչական շենքերի, էլ. մագնիսական հոսքաչափերի և ՕԿՁ-ի էլ. սնուցման մալուխների և լուսավորության վերականգնման աշխատանքներ: Թվով 5 հասցեում հայտնաբերվել են ջրագծի վթարներ:

1.6. ՄԵՔԵՆԱ-ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐ

Հունվար ամսվա ընթացքում իրականացվել են մեքենամեխանիզմների վերանորոգման լայնածավալ աշխատանքներ, որոնց արդյունքում դրանք կարգաբերվել են և պատրաստ են հետագա շահագործման համար: «Հարավ» ՇՏ կողմից շահագործվող մեքենամեխանիզմների պատշաճ շահագործման համար հունվար ամսվա ընթացքում նորոգվել են թվով 2 մեքենայի արգելակման համակարգերը, փոխարինվել են արգելակման սալիկները, խողովակները, վակուումները, սկավառակները և ձեռքի ճուլանները:

Ընթացքային մասերի նորոգում է իրականացվել թվով 6 մեքենա-մեխանիզմի վրա, փոխարինվել են գնդավորներ, հողակապեր, էլաստիկ մուֆտեր, հեղյուսներ, մանեկներ, դեկի ձգաձողեր, ուղղորդիչ վռաններ, մեղմիչներ, անվակունդի առանցքակալներ, հարվածամեղմիչի զսպանակներ և հարվածամեղմիչիցներ, կարդանի խաչուկներ, ատամնանիֆներ, առանցքակալներ, կիսաստնիներ, խտաբուկեր, մանեկներ, սատելիտներ:

Փոխարինվել են թվով 42 մեքենա-մեխանիզմի շարժիչի, փոխանցման տուփի, հիդրոհամակարգի յուղեր, անտիֆրիզ, արգելակման հեղուկ, քսայուղեր և զտիչներ:

Թվով 13 անվաղող նորոգվել են, փոխարինվել և հավասարակշռվել են:



Թվով 4 մեքենա-մեխանիզմի մարտկոց փոխարինվել է նորերով:

Հովացման համակարգի նորոգում է իրականացվել թվով 5 մեքենայի վրա, փոխարինվել են հովացման ռադիատորների կափարիչները, խողովակները, փոկերը և ջրի պոմպերը:

Թվով 3 մեքենայի վրա, փոխարինվել են կցորդման սկավառակներ, շաղկապման մեխանիզմներ, անջատող առանցքակալներ և խտաբուկեր:

Թվով 4 մեքենայի վրա իրականացվել են գներատորի նորոգում, փոխարինվել են ածուխներ, դիողային կամրջակներ, առանցքակալներ և տուլկիներ:

Թվով 10 մեքենա-մեխանիզմի համար նորոգվել է և փոխարինվել են բարձր ճնշման ռետինե խողովակներ:

Վերանորոգվել են թվով 8 մեքենայի հոսանքի մալուխները, կայծամուներ, կայծամումի լարեր, ռելեներ, վառոցքի բանալիներ:

Թվով 3 մեքենայի վառելիքի համակարգերը նորոգվել են, փոխարինվել են բարձր ճնշման մղիչներ, բոցամուղեր, կայծամուներ:

Թվով 3 մեքենայի մեկնարկիչները նորոգվել են, փոխարինվել են ածուխները, վռանները, փաթույթները և բենդեքսները:

Հիդրավլիկ համակարգի նորոգում է իրականացվել թվով 3 մեքենա-մեխանիզմի վրա, փոխարինվել են խցուկներ, բարձր ճնշման մղիչներ, ռետինե խողովակներ:

Վերոնշյալ աշխատանքների արդյունքում հիմնականում մեքենա-մեխանիզմներն աշխատում են անխափան, որը նպաստում է ժամանակին վերացնել համակարգում առկա ջրամատակարարման և ջրահեռացման վթարները:



ԱՌԵՎՏՐԱՅԻՆ
ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆ



2.1. ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐԻ ՏՎՅԱԼՆԵՐ

Շարունակվում է բաժանորդների հետ պայմանագրերի կնքման գործընթացը: 01.02.2023թ. դրությամբ «Ինտերակտիվ» համակարգ է մուտքագրվել 594,552 պայմանագիր: Հաշվառված բաժանորդների քանակական տվյալները հաշվետու ամսվա դրությամբ բերված են ստորև աղյուսակում.

Տնօրինություն	Սպառողներ	2023թ. հունվար ամսին ծառայություններ ստացած բաժանորդների թիվ	Կնքված պայմանագրերի քանակը	%
Առևտրային	Բնակիչ-բաժանորդ	663,536	567,303	85,5
	Իրավաբանական անձ	31,313	27,249	87,0

Հաշվառված բաժանորդների քանակական տվյալները հաշվետու ամսվա դրությամբ բերված են ստորև աղյուսակում.

Տնօրինություն	Սպառողներ	Բաժանորդների ընդհանուր քանակ	Ծախսող բաժանորդների քանակ	%
Առևտրային	Բնակիչ-բաժանորդ	740,119	602,578	81,4
	Իրավաբանական անձ	36,713	26,238	71,5

Սպառում չունեցող (0-ական ծախսեր) բաժանորդների մասով, հնարավորության դեպքում, լրացուցիչ ստուգայցեր են իրականացվում ինչպես տեղամասերի մասնագետ-տեսուչների, այնպես էլ կենտրոնական գրասենյակի համապատասխան աշխատակիցների կողմից: Միաժամանակ համեմատական վերլուծություններ են կատարվում այլ ծառայություններ մատուցող ընկերությունների տվյալների հետ:

Առևտրային տեղամասերի սպասարկման տարածքում հաշվետու ամսում համապատասխան փաստաթղթերի հիման վրա ձևակերպվել և տվյալների բազա է մուտքագրվել թվով 894 նոր բաժանորդ:

2.2. ՀԱՍՈՒՅԹ


Շարունակվում է ջրաչափերի փոխարինման գործընթացը: Պիլոտային ծրագրերին (Շիրակ, Լոռի, Սևան և այլն) գույքահետ փոխարինվում են նաև այլ տարածքներում շարքից դուրս եկած ջրաչափերը: Նախկին ցածրորակ ջրաչափերը փոխարինվում են նոր՝ բարձրակազ և ավելի զգայուն ջրաչափերով: Խոշոր սպառում ունեցող իրավաբանական բաժանորդների ջրաչափերը հնարավորության դեպքում միացվում են Լոկատոր համակարգին ծախսերը պարբերաբար, առանց այցելության, առցանց հսկելու նպատակով:

Իրավաբանական անձերի ջրաչափերը փոխարինվում և տեղափոխվում են բաժանորդների տարածքներից դուրս գտնվող հատուկ դիտահորեր, որը նվազեցնում կամ գրեթե բացառում է ապօրինությունների հնարավորությունը: Գրեթե ամբողջովին փոխարինվել և բաժանորդների տարածքներից դուրս են տեղափոխվել գործող բուժ. հաստատությունների, զին. մասերի, դպրոցների և մանկապարտեզների ջրաչափերը:

Փոխարինված ջրաչափերն ուղարկվում են պարտադիր լաբորատոր ստուգաչափման: Հունվար ամսվա ընթացքում ստուգաչափվել է 2453 ջրաչափ:

Տնօրինություն	Սպառողներ	Մարքին	Անսարք	Միջամտած	Ստուգաչափված ջրաչափերի քանակ առ 12.2022
Առևտրային	Բնակիչ-բաժանորդ	872	789	127	1788
	Իրավաբանական անձ	405	208	52	665
	Ընդամենը	1277	997	179	2453

Ստուգաչափված ջրաչափ




Փոխարինված ջրաչափերի լաբորատոր ստուգաչափման արդյունքների վերլուծությունը ցույց է տալիս, որ առկա ջրաչափերի որոշ մասն ունի խնդիրներ: Օրինակ՝ հունվար ամսին փոխարինված 2453 ջրաչափերի մոտ 48 %-ը (կամ 1176 ջրաչափ) անսարք է կամ առկա է արտաքին միջամտություն:

Միջամտած ջրաչափերի մասով կազմվում են համապատասխան արձանագրություններ:

Ընթացիկ ամսում լաբորատոր ստուգաչափման արդյունքում, անսարք և միջամտած ջրաչափերից կազմված արձանագրությունների հիման վրա վերահաշվարկվել է 271,003 մ³ հասույթ:

Ստորև՝ գրաֆիկային տեսքով, բերված են 2023թ. բաժանորդների ամսական սպառման ծավալները նախորդ տարվա նույն ժամանակահատվածի հետ համեմատ.

Հասույթ



2.3 ԳԱՆՁՈՒՄ

Հունվար ամսին նախորդ ամսվա ձևավորված հասույթի համեմատ գանձումը կազմել է 2,046 մլն. դրամ (94 %): Նախորդ ամսվա ձևավորված հասույթի դիմաց վճարումները սահմանված ժամկետում ապահովելու նպատակով ընկերությունում կիրառվում են բաժանորդներին ուղարկվող հիշեցումների և ծանուցումների մի շարք մեթոդներ՝ SMS-հաղորդագրություն, էլեկտրոնային հաղորդագրություն, գրավոր՝ փոստային առաքում, ծանուցումներ, հեռախոսազանգեր և այլն:

Պարբերաբար չվճարող բաժանորդներին «վճարման դաշտ» բերելու նպատակով՝ հնարավորության դեպքում իրականացվում են պայմանագրով և գործող կարգով նախատեսված անհատական ջրամատակարարման դադարեցումներ՝ մինչև պարտքի մարումը կամ պարտքի մարման ժամանակացույցի կնքումը, սակայն, հաշվի առնելով որոշակի հանգամանքներ, հատկապես սահմանամերձ բնակավայրերում, հաշվետու ամսվա ընթացքում մեր կողմից չեն իրականացվել նաև պայմանագրով և գործող կարգով նախատեսված անհատական ջրամատակարարման դադարեցումներ:

Այս իրավիճակը, բնականաբար, իր բացասական ազդեցությունն է ունեցել գանձման բարձր, նախատեսված ցուցանիշների ապահովման գործում:

2.4 ԴԵԲԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐ / ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ/

Համեմատաբար մեծ դեբիտորական պարտքերի գանձման նպատակով Առևտրային տնօրինության աշխատակիցների կողմից շարունակվում է պարտքերի մարման ժամանակացույցերի կնքման գործընթացը: Հունվար ամսվա ընթացքում Առևտրային տնօրինության կողմից կնքվել է թվով 131 պարտքի մարման ժամանակացույց՝ մոտ 14.5 մլն դրամ ընդհանուր գումարով:

Ժամկետանց խոշոր դեբիտորական պարտք ունեցող բաժանորդների պարտքերի գանձմանն իրավական ընթացք տալու համար, առաջնահերթ նոր պայմանագրեր են կնքվում այդ բաժանորդների հետ, ճշգրտվում են դեբիտորական պարտքերի չափը, և պարտատերերի ցուցակները ներկայացվում են իրավաբանական վարչություն:


Դեբիտորական պարտքերի վերաբերյալ տվյալները բերված են ստորև ներկայացված աղյուսակում.

Տնօրինություն	Պարտքը 01.02.2023թ. դրությամբ (մլն. ՀՀ դրամ)	Այդ թվում հուլիս ամսվա հասույթ (մլն. ՀՀ դրամ)
Առևտրային, այդ թվում	9,929	2,350
Բնակիչ-բաժանորդներ	7,144	1,588
Իրավաբանական անձեր	2,785	762

Հարկ է նշել, որ մարզերի տարածաշրջանի բաժանորդների առկա պարտքերը դեռ հստակեցված չեն և առայժմ հանված չեն այլ ընկերություններ փոխանցված վճարումները, ինչպես նաև հաշվի չեն առնված բաժանորդների՝ նախկինում ունեցած կանխավճարները: Նշված հանգամանքը բավականին դժվարեցնում է բաժանորդների հետ դեբիտորական պարտքերի ճշգրտման ու գումարների հավաքագրման գործընթացը, ինչպես նաև դատական գործընթացի արդյունավետ կազմակերպումը:

ԵՏՏՍ սպասարկման տարածքում շուրջ 312.8 մլն. ՀՀ դրամը կուտակվել է երկու բաժանորդներին մատուցված ջրամատակարարման ծառայությունների դիմաց մեծածախ սակագնով պարբերաբար չվճարելու պատճառով. Դրանք են՝ «Հաճն Ջուր» ՀՈԱԿ-ը և «ՀՀ Արարատի մարզի Ազատաշեն» համայնքը:

2023 թ. դեբիտորական պարտքերի շարժը / մլն. դրամ (Մարզեր)



2.5 ՋՐԱՉԱՓԵՐ

Բաժանորդների տվյալների բազայում 01.02.2023թ. դրությամբ հաշվառված ջրաչափով և առանց ջրաչափի (նորմատիվային եղանակով հաշվարկվող) բաժանորդների քանակական տվյալները բերված են ստորև աղյուսակում.

Տնօրինություն	Սպառողներ	Բնակիչ-բաժանորդներ			Բրավարանական		
		Ընդամենը	Այդ թվում ծախսող	%	Ընդամենը	Այդ թվում ծախսող	%
Առևտրային	Ջրաչափով	709,227	601,243	84.77	35,644	26,229	73.59
	Առանց ջրաչափի	30,892	1,335	4.32	1,069	9	0.84

Տվյալների բազայում 01.02.2023թ. դրությամբ պիտանելիության ժամկետը (12 տարին) գերազանցող ջրաչափերի քանակական տվյալները ներկայացված են աղյուսակային տեսքով.

Տնօրինություն	Բնակիչ-բաժանորդներ			Բրավարանական		
	Գործող ջրաչափերի քանակը	Այդ թվում ժամկետանց	%	Գործող ջրաչափերի քանակը	Այդ թվում ժամկետանց	%
Առևտրային	880,479	393,964	44.74	39,390	10,655	27.05

Առաջնահերթությամբ՝ խափանված, հետո պիտանելիության ժամկետը գերազանցող ջրաչափերի տվյալները ներկայացվում են համապատասխան ստորաբաժանումներին՝ դրանց փոխարինման նպատակով:

Հաշվետու ամսվա ընթացքում տեղադրվել և փոխարինվել է (այդ թվում թաղամասային ծրագրով) 4518 ջրաչափական սարք: Այդ թվում՝ նախկինում ջրաչափական սարք չունեցող բաժանորդների մոտ տեղադրվել է 682 նոր ջրաչափ և այդ բաժանորդներին մատուցված ծառայությունների հաշվարկն այսուհետ կատարվում է նոր տեղադրված ջրաչափերի ցուցմունքների հիման վրա:

Երևանի թաղամասային ծրագրի շրջանակներում կապալառու ընկերությունների կողմից իրականացվում են գոյություն ունեցող ջրաչափերի փոխարինման աշխատանքներ ավելի բարձր դասի ջրաչափերով, ինչն էլ նպաստում է բաժանորդների միջին ծախսի ճշգրիտ հաշվառմանը:

ՊԿԱԾ տեղադրված ջրաչափեր

Հասցե	Ջրաչափերի ընդհանուր քանակ	Տեղադրված ջրաչափերի քանակ	%
գ.Քասախ	2425	1992	81.9
գ.Պոռշյան	1656	1129	66.5
ք.Հրազդան, Միկրոշրջան թաղ.	5959	1908	32.4

Տեղամասերում ընկերության տնօրինությունների ուժերով իրականացվում է բաժանորդների ջրաչափերի փոխարինման թաղամասային ծրագիր:

Ջրաչափերի փոխարինման աշխատանքներ են իրականացվել Լոռի, Շիրակ, Գորիս, Կապան, Սիսիան, Արարատ և Արտաշատ տեղամասերի սպասարկման տարածքներում: Առկա անսարք և փոխարինման ենթակա ջրաչափերից արդեն փոխարինվել է Լոռի տեղամասի սպասարկման տարածքի տարբեր հասցեներում՝ 13581, Շիրակ տեղամասի սպասարկման տարածքում՝ 13494, Գորիս տեղամասի սպասարկման տարածքում՝ 3157, Կապան տեղամասի սպասարկման տարածքում՝ 3900, Սիսիան տեղամասի սպասարկման տարածքում՝ 2289, Արարատ տեղամասի սպասարկման տարածքում՝ 3300 և Արտաշատ տեղամասի սպասարկման տարածքում՝ 5854 ջրաչափական սարք:

2.6 ԱՊՕՐԻՆԻ ՄԻԱՑՈՒՄՆԵՐԻ ՀԱՅՏՆԱԲԵՐՈՒՄ ԵՎ ՎԵՐԱՑՈՒՄ

Առևտրային տնօրինության տեղամասերի աշխատակիցների ամենօրյա աշխատանքի մաս են կազմում ապօրինի միացումների հայտնաբերման, արձանագրման և ապօրինությունների վերացման ուղղությամբ աշխատանքները: Կազմված արձանագրություններն «Ինտերակտիվ» համակարգ մուտքագրելուց հետո, ապօրինություն կատարած անձիք սահմանված կարգով ծանուցվում են, նրանց են ներկայացվում վերահաշվարկվող, վճարման ենթակա գումարների չափերը, իսկ տվյալ հասցեները փոխանցվում են տարածաշրջանի շահագործման տնօրինությանը՝ ջրագրկում իրականացնելու նպատակով:

Հաշվետու ժամանակահատվածում հայտնաբերված ապօրինի միացումների վերաբերյալ կազմված արձանագրությունների հիման վրա վերահաշվարկված ջրածախսերի և դրա դիմաց կատարված վճարումների տեղեկատվությունը բերված է ստորև ներկայացված աղյուսակում:

Տնօրինություն	Քանակ	Խ.մ.	Գումար (ՀՀ դրամ)
Առևտրային	221	101,180	19,206,572

Ապօրինությունների հայտնաբերման և արձանագրությունների կազմման գործառույթը, տեղամասերի առևտրային ծառայության աշխատակիցներից բացի, հիմնականում իրականացվում էր Գլխավոր տնօրինության առևտրային վերահսկողության աշխատակիցների կողմից:


ՏԵԽՆԻԿԱԿԱՆ
ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆ



3.1. ԶՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ


Ստորև ներկայացված գրաֆիկում պատկերված Երևան քաղաքի հունվար ամսվա (15-ի դրությամբ) շարունակականության տվյալը կազմել է՝ 96.6%, ինչը 2% ավել է նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի ցուցանիշի համեմատ:

Ջրամատակարարման շարունակականություն Երևան




Շարունակում է գործել ընկերության կողմից սպասարկվող բնակավայրերի ջրամատակարարման գրաֆիկը, որը համաձայնեցվել է Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի հետ:

Հաշվետու ամսվա ընթացքում շարունակականության և մոնիթորինգի բաժնի կողմից ՇՏ-ներում կարգաբերվել են թվով 80 ՃԿՓ-ներ: Ստորև ներկայացված է կարգաբերված ՃԿՓ-ների գրաֆիկներից մի քանիսը:




Երևան քաղաքը սնող Գառնի, Ապարան, Արզնի 1, Արզական, Գյումուշ 1, 2 և Կաթնաղբյուրի ջրատարների ինքնահոս ջրաքանակը 2023թ-ի հունվար ամսին, 2022 թ-ի նույն ժամանակահատվածի համեմատ, նվազել է 89 լ/վ-ով, իսկ Երևան քաղաքի ջրարտադրության համար հոսանքի ծախսը նվազել է 77 հազար կՎտ-ով, ինչը երևում է ստորև ներկայացված գրաֆիկում:



3.2. ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԻԱՅԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Հաշվետու ամսվա ընթացքում էլ. էներգիայի ծախսը Երևան քաղաքում նվազել է 26 131 կՎտ.ժ (4.80 %), այն դեպքում երբ նորակառույց շենքերի 14 պոմպակայան ավելացել է «Վեռլիա Ջուր» ՓԲԸ-ի հաշվեկշռում՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշների համեմատ: Այդ 14 պոմպակայանների էլ. էներգիայի ծախսը միայն կազմում է 6938 կՎտ.ժ: Իսկ առանց այս պոմպակայանների էլ. էներգիայի ծախսը կնվազեր 33 069 կՎտ.ժ:

Երևան քաղաքի բակային պոմպեր (առանց Խարբերդի պոմպակայանի)



Մեծ ուշադրություն է հատկացվել նոր տեղադրված ընթերցվող էլ. հաշվիչների ծախսերին՝ ոչ միայն խախտումների կանխման, այլև ծախսի ժամային գրաֆիկների վերլուծության միջոցով պոմպերի և այլ սպառիչների շահագործման ընթացքում ծագած խնդիրների հայտնաբերման նպատակով:

Ուսումնասիրված հասցեներ

Հաշվետու ժամանակահատվածում ուսումնասիրվել է 150 հասցե:


Ուսումնասիրության արդյունքում թվով 2 հասցեում հայտնաբերվել են ապօրինի լարանցումներ, կազմված արձանագրությունների հիման վրա վերականգնվել է:

2 հասցեում ձեռք է բերվել էլ. էներգիայի մատակարարման տեխնիկական պայմաններ.

- ▶ Առինջ Բ թաղամաս 1-ին փողոց, 2-րդ հողատարածքի մոտ,
- ▶ Առինջ Բ թաղամաս Առինջեցու փողոց, 19 հողատարածքի մոտ:

● Գյումրի քաղաքում էլ. էներգիայի ծախսը ավելացել է 384 կՎտ.ժամ 1,2%՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշների համեմատ:

Շիրակ




Պոմպակայանների ուսումնասիրություն

Թվով 28 խոշոր պոմպակայաններում կատարվել են ուսումնասիրություններ, որոնց արդյունքում 14 պոմպակայանում վերացվել են հայտնաբերված թերությունները:

385 բակային պոմպակայաններում կատարվել են ուսումնասիրություններ, որոնց արդյունքում 304 հասցեում վերացվել են հայտնաբերված թերությունները: Ինչպես նաև իրականացվել են վարչական շենքերի, էլ. մագնիսական հոսքաչափերի և ՕԿՁ-ի էլ. սնուցման մալուխների և լուսավորության վերականգնման աշխատանքներ: Հինգ հասցեում հայտնաբերվել են ջրագծի վթարներ:

Ինվերտորների տեղադրում

Տեղադրված ընդհանուր 72 ինվերտորային համակարգով պոմպերի սպառած էլ. էներգիան, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ, նվազել է 25 736 կՎտ.ժ կամ 23%:




Խոշոր պոմպակայանների էլեկտրաէներգիայի խափանումներ

● Հաշվետու ժամանակահատվածում 12 խոշոր պոմպակայանում էլ. մատակարարման խափանումներն օպերատիվ կերպով շտկվել են, իսկ առաջացած թերությունները՝ հայտնաբերվել և վերացվել:

● Ընդհանուր էլեկտրաէներգիայի ծախսը նվազել է 338 215 ԿՎտ.ժ կամ 7,31 %՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ.

Երևան քաղաքի՝ «Վեոյիա Ջուր» ՓԲԸ կողմից սպառած էլ. էներգիան



3.3. ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Ստորև աղյուսակում ներկայացվում են հունվար ամսվա ընթացքում աշխարհագրական տեղեկատվական համակարգում կատարված աշխատանքները.

Աշխատանքի անվանում	Չ/Մ	Քանակ
Երևանի Կենտրոն, Հյուսիս, Մաշտոց, Շահումյան տեղամասերի, Տավուշի մարզի Դիլիջան և Բերդ քաղաքների ջրագծերի, Շիրակի մարզի ջրատարների ուղղումներ և թարմացումներ	վայրեր	7
ՄՏ համակարգ է անցկացվել, վերանայվել համայնքների ջրագծերը	համայնք	8
ՀՀ Լոռու մարզի Վեոյիա Ջուր ՓԲԸ սպասարկվող բնակավայրերի փողոցների և շենք/ շինությունների թվային շերտերի թարմացում և բազավորում.	մարզ	1
Դիլիջան քաղաքի հիդրավիլի մոդելավորում	մոդելավորում	1
113 տեխնիկական պայմանների թվայնացում	Տեխ.պայման	113
Արագածոտն գյուղի կոյուղագծերի թվայնացում	գյուղ	1
Կառուցված ջրագծերի երկարությունը Երևանում	մետր	2621,9
Շահագործումից հանված ջրագիծ Երևանում	մետր	587,9
Տեղադրված կամ փոխարինված փականներ Երևանում	հատ	175
ՄՏ-ում առկա Երևան քաղաքի ջրագծերի և ջրատարների երկարությունը	կմ	2499
Մարզային ջրագծերի և ջրատարների երկարությունը	կմ	9121
«Ինտերակտիվ» համակարգում ֆիզիկական կետերի ուղղում	կետ	3500
«Ինտերակտիվ» համակարգում իրավաբանական կետերի ուղղում	կետ	200
«Ինտերակտիվ» համակարգում իրավաբանական նոր կետերի ավելացում	կետ	185
«Ինտերակտիվ» համակարգում ֆիզիկական նոր կետերի ավելացում	կետ	388
Երևան քաղաքի ընդհանուր կոյուղու երկարությունը	կմ	1790
Մարզային կոյուղու երկարությունը	կմ	1811

3.4. ՋՐԱՏԱՐ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ

Ստորև ներկայացնում ենք հունվար ամսվա ընթացքում հայտնաբերված վթարների և կատարված աշխատանքների համառոտ բնութագիրը:

Արգնի 2

Դիտավորյալ քարաթափման պատճառով ջրատարը փասավել էր «Ծարավ աղբյուր» սանիտարական գոտու վերնամասում: Վթարված հատվածում ջրակորուստը կազմում էր ≈ 100 լ/վ: Կազմակերպվել է ջրատարի կանգառ, և վթարը վերացնելուց հետո վերականգնվել է ջրատարի բնականոն աշխատանքը:



Ապարան ջրատար

Շրջայցի ընթացքում հայտնաբերվել է վթար Երզնկա գյուղի միացման վրա ≈ 2 լ/վ, որը վերացվել է «Մաշտոց» ՇՏ-ի կողմից:



Կատարվել են նաև ուսումնասիրություններ Գյումուշ սանիտարական գոտու հարակից հատվածներում՝ Երևան քաղաքին տրվող ջրաքանակների ավելացման համար: Տրվել է ծրագրի առաջարկ, իսկ Արգնիի սան. գոտում աշխատանքները կմեկնարկվեն եղանակային բարենպաստ պայմանների ժամանակ:

ՋՀԿ բաժնի կողմից կատարվել են ջրաքանակների կարգաբերման աշխատանքներ:

Գոտիավորման աշխատանքներ

Քաղաք Գյումրի

● Շիրակ տեղամասի հետ համատեղ ուսումնասիրություն է կատարվել Գյումրի քաղաքի Արևմտյան շրջանցող ճանապարհի տակ առաջացած գաղտնի վթարը: Տեղանքով անցնող բոլոր ջրագրերն ուսումնասիրելիս պարզվել է, որ վթարված է $D=50$ մմ գործող ջրագիծ: Արդյունքում խցափակման եղանակով շահագործումից հանվել է $D=50$ մմ $L=350$ մ պողպատե ջրագիծ՝ տնտեսելով մոտ $Q = 0,7-1$ լ/վ ջրաքանակ:



Քաղաք Հրազդան



● Հրազդան քաղաքի Ջորավար Անդրանիկ պողոտայում իրականացվող վթարաորոնողական աշխատանքների արդյունքում 84 շենքի տակ $D=50$ մմ պողպատե ջրագծի վրա հայտնաբերվել է վթար: Վթարը վերացնելուց հետո տնտեսվել է $Q = 5,5$ լ/վ ջրաքանակ:

Գյուղ Քաղսի

● Քաղսի գյուղում իրականացված գոտիավորման աշխատանքների արդյունքում 5-րդ փողոցով անցնող $D=100$ մմ պողպատե ջրագծի վրա հայտնաբերվել է վթար: Վթարը վերացնելուց հետո տնտեսվել է $Q = 1$ լ/վ ջրաքանակ:



Քաղաք Դիլիջան



● Կամոյի փողոց թիվ 6 դպրոցի ջրագիծը ուսումնասիրելիս հայտնաբերվել է վթար նախկին, չգործող կաթսայատան ջրագծի վրա: Նշված վթարված ջրագիծը խցափակելուց հետո տնտեսվել է $Q = 2.8$ լ/վ ջրաքանակ:


Քաղաք Երևան

● «Կենտրոն» տեղամասի աշխատակիցների հետ իրականացված վթարաորոնողական աշխատանքների արդյունքում Արշակունյաց 1 և 3 շենքերին սնուցող $D=50$ մմ մուտքագծի վրա հայտնաբերվել է գաղտնի վթար: Քայքայված պողպատե ջրագիծը փոխարինվել է $D=20$ մմ ՊԷ ջրագծով՝ տնտեսելով $Q = 2$ լ/վ ջրաքանակ:



● «Շահումյան» տեղամասի հետ իրականացված վթարաորոնողական աշխատանքների արդյունքում հայտնաբերվել է գաղտնի վթար «Րաֆֆիի գոտում»՝ Ջորավար Անդրանիկ փողոց Ճառագայթային Գ շենքի դիմաց $D = 500$ մմ ջրագծի վրա: Վթարը վերացնելուց հետո տնտեսվել է $Q=26$ լ/վ ջրաքանակ:

● «Ջեյթուն» տեղամասի Գոգոլ փողոցում իրականացված ուսումնասիրությունների արդյունքում հայտնաբերվել է գաղտնի վթար Գոգոլ 52 տան դիմացով անցնող $D=200$ մմ պողպատե ջրագծի վրա: Վթարը վերացնելուց հետո տնտեսվել է $Q=15$ լ/վ ջրաքանակ:



● «Շենգավիթ» տեղամասի աշխատակիցների հետ համատեղ իրականացված վթարաորոնողական աշխատանքների արդյունքում հայտնաբերվել է գաղտնի վթար Շիրակի 90 հասցեի դիմացով անցնող $D=300$ մմ պողպատե ջրագծի վրա: Վթարը վերացնելու արդյունքում տնտեսվել է $Q = 7$ լ/վ ջրաքանակ:

● «Մաշտոց» տեղամասի աշխատակիցների հետ իրականացված վթարաորոնողական աշխատանքների արդյունքում Դավթաշեն 4րդ թաղամասում հայտնաբերվել է վթար $D=700$ մմ ջրագծի վրա: Վթարը վերացնելու արդյունքում տնտեսվել է $Q = 17$ լ/վ ջրաքանակ:



3.5 ՔԼՈՐԻ ԵՎ ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ՄԱՔՐՄԱՆ ԿԱՅԱՆՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Ընթացիկ ամսում Քլորի և խմելու ջրի մաքրման կայանների ծառայության կողմից իրականացվել են հետևյալ աշխատանքները.

● Քաղաք Երևանի Ավան Բարաջանյան 3/1 հասցեում վերանորոգվել է հեղուկ քլորի վակուում կարգավորիչը՝ պահեստավորելու նպատակով:



● Քաղաք Թալինի Մանթաշ քլորակայանում հեղուկ քլորի համակարգի անխափան աշխատանքն ապահովելու նպատակով շարքից դուրս եկած հեղուկ քլորի համակարգի վակուում կարգավորիչը փոխարինվել է վերանորոգված վակուում կարգավորիչով:

● Քաղաք Վարդենիսի Շատ-Ջրեք քլորակայանում հեղուկ քլորի համակարգի բալոնի վրայի շարքից դուրս եկած փականը փոխարինվել է վերանորոգված փականով, որն էլ հետագայում կապահովի հեղուկ քլորի համակարգի անխափան աշխատանքը:



● Քաղաք Աշտարակի «Շոր-Շոր» քլորակայանում հեղուկ քլորի համակարգի անխափան աշխատանքն ապահովելու նպատակով հեղուկ քլորի համակարգի հնամաշ շարքից դուրս եկած վակուում կարգավորիչը փոխարինվել է նորով:


3.6 1-85 ԹԵԺ ԳԻԾ

185 հեռախոսային կանչերի օրական հաշվառման հաշվեկիթ

● Հաշվետու ամսվա ընթացքում 1-85 հեռախոսակենտրոնում գրանցվել է 32524 զանգ:

● Առևտրային բնույթի զանգերի քանակը կազմել է 8855 զանգ, որից Երևան քաղաքինը եղել է 6622 զանգ (74,8%), իսկ մարզերինը՝ 2233 զանգ (25,2%):

● Շահագործման վերաբերյալ ստացվել է 23669 զանգ, որից Երևան քաղաքինը՝ 16017 զանգ (67,7%), իսկ մարզերինը՝ 7652 զանգ (32,3%):



● 2022թ. հունվարի համեմատ՝ 2023թ. հունվար ամսին 5,32%-ով նվազել է առևտրային զանգերի քանակը, իսկ շահագործման զանգերի քանակն ավելացել է 18,43%-ով:

● 2022թ. հունվարի համեմատ՝ 2023թ. հունվար ամսին 14%-ով ավելացել է ֆիքսված զանգերի քանակը, 9%-ով՝ 5 բուքինգ ավել զանգերի քանակը և 13%-ով՝ հայտարարությունների լուսն ավտոմատ ծառայության միջոցով:

● 2022թ. հունվարի համեմատ՝ 2023թ. հունվար ամսին 23,56%-ով ավելացել են ջրամատակարարման բողոքները:



	Ստորաբաժանում	2022 հունվար	2023 հունվար	
Առևտրային	Ընդամենը	9353	8855	-5.32%
	Երևան	7321	6622	-9.55%
	Մարզեր	2032	2233	9.89%
Շահագործում	Շահագործում	19986	23669	18.43%
	Երևան	13342	16017	20.05%
	Արարկիթ	2250	2409	7.07%
	Քանաքեռ-Զեյթուն	1026	1420	38.40%
	Մաշտոց	1742	2183	25.32%
	Շահումյան	1564	1451	-7.23%
	Շենգավիթ	2376	2876	21.04%
	Կենտրոն	1832	2995	63.48%
	Հյուսիս/Ավան Նոր Նորք/	1125	1249	11.02%
	Էրեբունի	1427	1434	0.49%
	այդ թվում կոյուղու վթար	92	184	100.00%
	այդ թվում դիտահորի խցանում	4964	5853	17.91%
	ՄԱՐԶԵՐ	6644	7652	15.17%
Հարավ	3751	3519	-6.19%	
Հյուսիս	2893	4133	42.86%	
այդ թվում կոյուղու վթար	20	28	40.00%	
այդ թվում դիտահորի խցանում	2613	2857	9.34%	
Ընդամենը	29339	32524	10.86%	

ԼՐԱՏՎԱԿԱՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ



Հաշվետու ամսին Հանրային կապերի բաժինն /ՀԿԲ/ առաջին հերթին ուշադրություն է դարձրել ձմեռային եղանակներով պայմանավորված համակարգի ինժեներական կառույցներում առաջացող խնդիրներին, որոնց մասին ապահովվել է մի քանի հրապարակում:



Այս ուղղությամբ տարվա առաջին մեծ հրապարակումը փաստորեն հունվարի 11-ին էր, երբ, ամփոփելով անցած տաս օրերին ընկերության աշխատանքի արդյունքները, ՀԿԲ-ն փաստել է, որ, չնայած նախալեռնային ու լեռնային շրջանների շատ բնակավայրերում առատ ձյան առկայությանը և ցրտերի հետ կապված դժվարություններին, ՎեոլիաԹիմը շարունակել է իր բնականոն աշխատանքն ու ապահովել համակարգի կայուն շահագործումն ու սպառողների ջրամատակարարումը: Օրինակ, հրապարակվել են լուսանկարներ գրառուսներով Երևան, Հրազդան, Վեդի, Մարտունի, Միսիան, Մեղրի, Մասիս, Վանաձոր, Չարենցավան քաղաքներում և այլ բնակավայրերում հունվարի առաջին օրերին իրականացված վթարների վերացման աշխատանքների մասին:

Սակայն ընկերության համար առավել դժվարին է եղել Ջրի մաքրման կայանների /ՋՄԿ/, ջրաղբյուրների ու այնտեղից սկիզբ առնող ջրագծերի աշխատանքի ապահովումը: Խոսքը մասնավորապես Վանաձոր, Բերդ, Կապան, Դիլիջան, Մեղրի ու Ագարակ քաղաքների մասին է, որտեղ ջուրն ամբողջությամբ կամ մասամբ ստացվում է մակերևութային աղբյուրներից՝ հիմնականում լեռնային գետակներից, որոնք տեղումների խիստ անբավարարության պատճառով սակավաջուր էին դարձել: Դրան ավելացել էր գիշերային ցածր ջերմաստիճանը սարերում, ինչի հետևանքով գետերը և Ջրի մաքրման կայանների ջրընդունիչները պարբերաբար սառցակալում էին: ՎեոլիաԹիմն այդ օրերին ջրաղբյուրներում գիշեր-ցերեկ հերթափոխով իրականացրել է սառույցների հալեցման, կոտրման աշխատանքներ սպառողներին ջրով ապահովելու համար:

ՀԿԲ-ն, ստեղծված արտակարգ իրավիճակում, նախ հանրությանը ծանուցել է ջրամատակարարման ժամանակացույցի հնարավոր խախտումների մասին՝ ջրի արտադրության ծավալների նվազման հետ կապված, այնուհետև հետևողականորեն լուսաբանել է /գրառուսներով, լուսանկարներով ու տեսանյութերով/ խնդրի լուծման ուղղությամբ Վեոլիա ընկերության աղբյուրներն ու ՋՄԿ-ները սպասարկող աշխատակազմերի ու համապատասխան շահագործման տեղամասերի կողմից տարվող աշխատանքները, որի շնորհիվ թե աղբյուրներն են պահվել աշխատանքային վիճակում, թե բաշխիչ ցանցում գրանցված վթարներն են վերացվել հնարավորինս արագ, եթե անգամ ջրմուղագործները ստիպված են եղել մի քանի կիլոմետր քայլել ճանապարհագուրդ լեռներով, իրենց հետ տանելով տեխնիկան ու ծախսանյութերը:



Հունվարը, իհարկե, լավագույն ժամանակաշրջանը չէ ներդրումային ծրագրերի համար, սակայն համակարգում այս ուղղությամբ աշխատանքները շարունակվել են, որին անդրադարձել է ՀԿԲ-ն: Խոսքը Արմավիրի մարզի Նորակերտ, Այգեկ, Բաղրամյան, Շահումյան, Մուսալեռ գյուղերի ջրամատակարարման բարելավման ծրագրի մասին է, որն իրականացվեց սեփական ուժերով: Նաև, ի դեմս նույն Արմավիրի մարզի Ծաղկալանջ գյուղի, որտեղ հնարավոր է դարձել ապահովել շուրջօրյա ջրամատակարարում, ներկայացվել է Վեոլիայի ներդրումային քաղաքականության արդյունավետությունը:



Այդ ընթացքում լուսաբանվել են ջրագծերի, կոյուղագծերի վթարների վերացման, կամ պոմպակայաններում ու քլորակայաններում իրականացված առավել կարևոր աշխատանքները Եղեգնաձորում, Դիլիջանում, Միսիանում, Ապարանում, Քանաքեռ-Զեյթունում, Կապանում, Շենգավիթում: Հատուկ նշվել է Հրազդանի համայնքապետարանի հետ 2022թ.-ից շարունակվող համագործակցությունը կոյուղիների փոխարինման մասով:

Սակայն առավել կարևոր է եղել Արաբկիրի Կորեայի ձոր կոչվող հատվածում Արզնի 2 – Երևան մայրուղային ջրատարի հերթական վթարի լուսաբանումը, որի պատճառ է հանդիսացել, նույնպես հերթական անգամ, տվյալ տարածքում շինարարական աղբի, այդ թվում՝ ծանր ծայրաբեկորների, ապօրինաբար թափումը:

VEOLIA

77 պետություն է վճարվել
5.595.063.000 77 դրամ
հարկ

#ՎԵՈԼԻԱԹԻՄ

Վեոլիայի համար այս ցավոտ խնդրի մասին ևս մեկ անգամ բարձրաձայնելով, ՀԿԲ-ն, ինչպես ցույց տվեցին հետագա իրադարձությունները, ըստ էության հասավ ցանկալի արդյունքի: Հրապարակումը ստիպեց ՀՀ շահագրգիռ գերատեսչություններին ու Երևանի քաղաքապետարանին կոնկրետ քայլեր ձեռնարկել մայրաքաղաքի տարածքում նման երևույթները բացառելու համար:

Հունվարին ուշադրություն է դարձվել նաև պաշտոնական տեղեկատվությանը: Օրինակ՝ ՀՀ ՊԵԿ-ի տարեկան հաշվետվության հրապարակումը, որի համաձայն Վեոլիա ջուր ՓԲԸ-ն վճարված հարկերի մոտ 5,6 մլրդ դրամ գումարով հանդիսացել է հանրապետության թիվ 42 հարկատուն, նպատակ է ունեցել հանրությանը ներկայացնել ընկերության տնտեսական կարևորությունը Հայաստանի համար և զգալի ներդրումը պետությունում: Հաջորդը՝ հունվարի 28-ին՝ Հայոց բանակի օրվա առթիվ համապատասխան հրապարակումն է ընկերության ֆեյսբուկյան էջում:

Հաշվետու ժամանակամիջոցում հրապարակվել են նաև ջրանջատուների, թափուր աշխատատեղերի ու ընկերության կարիքների համար պահանջվող ծառայությունների կամ ապրանքների մատակարարման մասին տարբեր հաղորդագրություններ:

Ընդ որում հրապարակումների մի մասը նաև առաքվել է հանրապետության առաջատար մոտ 60 լրատվամիջոցների: Իսկ երբեմն էլ դրանք, facebook.com/veolia.armenia-ից բացի, տեղադրվել են սպառողների հետ Օպերատորի կապի նաև մյուս digital միջոցներում. Veolia.am պաշտոնական կայքում, twitter.com/Veolia_AM և youtube Veolia Jur էջերում:



*ՈՐԱԿԻ, ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԵՎ
ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ*



5.1. ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ/ՄԵՄԻՆԱՐՆԵՐ


● Հաշվետու ամսում բաժնի պետը և Անվտանգության պատասխանատուն մասնակցեցին ՀՀ ՆԳ Նախարարության Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիայում անցկացված «Արտակարգ Իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության բնագավառում պատրաստվածության բարձրացման հարցերը» թեմայով դասընթացին՝ ավարտին ստանալով հավաստագրեր:



● Հաշվի առնելով Ընկերության կողմից սպասարկվող բաժանորդների սպասարկման որակը բարձրացնելու անհրաժեշտությունը, ինչպես նաև հիմք ընդունելով Վեոլիա Գրուպի Բարձր Ռիսկերի Կառավարման Ստանդարտների պահանջները, Բաժնի կողմից կազմակերպվեց և իրականացվեց Ընկերության «Երևան» շահագործման տնօրինության, Տեխնիկական տնօրինության և Վարձակալության պայմանագրի կառավարման տնօրինության թվով 40 աշխատողի համար 2 մոդուլից բաղկացած առկա դասընթաց.


▶ «Բաժանորդների սպասարկման որակի չափորոշիչները»,

▶ Վեոլիա Գրուպի «Երթևեկությունը աշխատավայրում» Բարձր Ռիսկերի Կառավարման ստանդարտի պահանջները:




● Բաժինը, համագործակցելով Ընկերության ավտոտրանսպորտային միջոցների սպասարկման ծառայության հետ, «Պրեմիում գազ» ՍՊԸ-ում կազմակերպեց Ընկերության գազաբաշխային համակարգով կահավորված ավտոտրանսպորտային միջոցներ շահագործող թվով 178 աշխատակցի համար հեղուկ և սեղմված բնական գազով շահագործվող մեքենաների վարորդների հրահանգավորում և վկայականների տրամադրում:

2022-2023թթ. կազմակերպված դասընթացներին/հրահանգավորումներին մասնակցած աշխատակիցների քանակների համեմատական գրաֆիկ



2022-2023թթ. կազմակերպված դասընթացներին/հրահանգավորումների ժամային համեմատական գրաֆիկ




5.2 ՌԻՍԿԵՐԻ ՀԱՅՏՆԱԲԵՐՈՒՄ/ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄ

● Բաժնի անվտանգության պատասխանատուներն իրականացրեցին անվտանգության ստուգայցեր Ընկերության թվով 3 քլորակայանում, 39 վարչական շենքում: Ստուգայցերի նպատակն էր իրականացնել ռիսկերի գնահատում և կառուցվածքները շահագործող անձնակազմերի կողմից Ընկերությունում հաստատված անվտանգության հրահանգների պահանջների կատարման որակի մոնիթորինգ:

● ՈԱԱ Բաժնի կողմից ուսումնասիրվել են Ընկերության ջրամատակարարման և ջրահեռացման ցանցերում իրականացվող թվով 10 վթարավերականգնողական աշխատանքների ընթացքում տեղամասերի վթարավերականգնողական աշխատանքային խմբերի կողմից անվտանգության հրահանգների պահանջների կատարման որակը, տեղում տրվել են ցուցումներ անվտանգության գործընթացի արդյունավետ կազմակերպման մասնավորապես ԱՊՄ-ների կիրառման, մշակվող խրամուղիների պարագծով գծանշման, ծանր տեխնիկայի շահագործման ուղղությամբ:

2023 թ. իրականացված անվտանգության ստուգայցերի քանակներն ըստ օբյեկտների





«ՎԵՈՒԼԻԱ ԶՈՒՐ» ՓԲԸ
ՀՀ, 0014, ք.երևան, Ն.Սարգսի 6/1
ՀՀ, 0025, ք.երևան, Աբովյան 66ա
E-mail: info@vjur.am